

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՂՈՒՆԻ ԵՒ ՈՐԲՈՒՆԻ

Այս անգամ խօսքս Ս. Ղազարու կղզուց լսուող վայնասունի մասին է:

Այդ վայնասունին արձագանք է տուել և «Մշակ» լրագիրը՝ թոյլ ևս տալիս ինձ «Լումայ»-ի յարգելի ընթերցողներին ծանօթացնել յիշեալ կրկնակի վայնասունների հետ:

Ընթերցողներն անշուշտ լսած կը լինեն, որ «Բազմավայր»-ը ծանր երկունքից յետոյ ծնաւ «Որբունիւն». «Բազմավայր»-ի անդրանիկ զաւակի երեսը դուք չէք տեսել: Հենց դրա մէջ էլ կայանում է ձեր երջանկութիւնը:

Բայց աւելի երջանիկը ինքը՝ «Որբունիւն» էր, որ շուտով մեռաւ, որովհետև վարակուած էր ժառանգական անբուժելի ախտերով, եթէ ապրէր էլ, թշուառագոյն կեանք պիտի ունենար:

Բայց աւանդ, «Բազմավայր»-ն էլ, շատ ու շատ անմիտ ծընողների նման, անդրանիկի թշուառագոյն մահից յետոյ, լոյս աշխարհ բներեց և մի ուրիշը՝ «Գեղունիւն»:

Վերջինիս ծնունդը հայ աշխարհին աւետուեց դափով ու գուռնայով, իսկ այդ թմբկահարների մէջ առաջին պատիւը պատկանում է «Մշակ»-ին:

Դեռ երեք տարին նոր լրացրած, ժառանգական ախտն արդէն գլուխ է բարձրացրել մանուկ «Գեղունիւն»-ի մէջ:

Եւ Ղազարեանների հաւատարմատարը ինչ որ Հ. Ս. Երեմեան սպառնում է հայ աշխարհին թոյլ տալ մանուկ «Գեղունիւն»-ին, որ մեռնի, եթէ հայերը բժշկական օգնութիւն չը հասցնեն նրան:

«Գեղունիւն»-ի համար առատ բաժանորդ, ով հայեր, ապա թէ ոչ—նա կը մեռնի իր անդրանիկ եղբօր—«Որբունիւն»-ի նման:

Այս է գուժում Հ. Երեմեանը:
Սակայն հայը ապացուցեց, որ գիտէ յանձին «Գեղունի»-ի
պատճել Երեմեաններին:

Արդէն Հ. Ս. Երեմեանը խոստովանում է, որ «Գեղունի»-ն
պատճուած է, որ նրա համարները դէզադէզ, անտէր՝ ան-
տիրական որք կը մնան տպարանի խորշերուն մէջ:

Ահա թէ ինչու Հ. Երեմեանի յուսահատութիւնը վիատե-
ցուցիչ է: Թէև որպէս սփոփանք իւր դառնացած սրտի, աշ-
խատում է հայի ցոյց տուած ցուրտ անտարբերութիւնը
դէպի մանուկ «Գեղունի»-ն, վերագրել հայի ժլատութեան:

Եւ իւր յատուկ շեշտով գոչում է.

«Ժլատութեան բռնակալ ոյժը պէտք է փշրել...»

Միամբ մարդ. նա գեռ չի ուզում խոստովանուել, որ
դա ժլատութեան հետևանք չէ, որ այդ ցուրտ անտարբերու-
թեամբ հայն ուզեց գործնականօրէն փշրել Հ. Երեմեանների
օր առուր աճող մեծամաութիւնը...

Եւ պատճեց հարկազրելով «Գեղունի»-ին, որ տպարանի
խորշերուն մէջ, Երեմեանի աշքի առաջև, դէզադէզ, անտէր՝
անտիրական մնան, հիւծուին, լուծուին ու փոշիանման, ինչ-
պէս Երեմեանի սպառնալիքները, հայհոյանքներն ու լուտանք-
ները:

Հայ հասարակութիւնից յետ չը մնացին նաև «անուն մը
ունեցող հայ գրագւանները, բանաստեղծները, նկարիչները, չը
տալով ոչ մի գրուածք, ոչ մի նկար»:

Ա'խ, որքան սիրուն է «Գեղունի»-ն, բայց ափսոս, որ
հայը զուրկ գեղարուեստական ճաշակից և նա՝ այդ ասիացի
հայը թոյլ է տալիս, որ մանուկը մեռնի ծաղիկ՝ հասակում...

Ալսպէս են ողբում Հ. Երեմեանները, այս ողբին է ար-
ձագանք տալիս նաև «Մշակ»-ը:

Այդ վայնասուսնի մէջ ես լսում եմ և մի արդէն հնացած
ֆրազ, այն է—որ «Գեղունի»-ի արդիւնքով բազմաթիւ որքեր
են կերակրում, ինամեռում ու կրթում, որոնք իբր թէ
«կսպասին»...

Սպասող որքերին օգնութեան ձեռք կառկառելու մար-
դասիրական վսեմ զաղափարը բաւական պիտի լինէր ստիպե-
լու հային, որ նա մոռանալով ամենայն ինչ, ձեռք մեկնէր նաև
Երեմեանների նման... անձնաւորութիւններին, եթէ միայն այդ
ճիշտ լինէր:

Սակայն Հայն իրաւունք է ունեցել քիչ ու շատ սկեպտիկ
վերաբերուելու Ղազարու կղզուց լսուող համանման երգե-
րին: Եւ ուզեցել է ու ուզում է իմանալ, թէ՝

ա) «Գեղունիւ-ի արդիւնքով թնչ որբեր են խնամուել կամ պիտի խնամուին»:

բ) Ո՞վքեր են նրանց խնամողները և ուր...

գ) Խնչպէս են խնամում, թնչ հոգով կրթում ու դաստիարակում...

Փակագծի մէջ նկատեմ, որ Օսմանեան սուլթանները նոյնպէս լաւ կերակրում, կրթում, խնամում էին քրիստոնէութեան գրիկց յափշտակած մասուկներին, սակայն կրթում, դաստիարակում էին այն հոգով, որ նրանք կազմում էին Ենի-Զէրիների ահարկու լէգիօնները, գարճնելով իրենց սուրբ դէպի իրենց ծնող քրիստոնեայ ազգերը...

դ) Ամենայն Հայոց կաթուղիկոսը կամ գէթ Պօլսոյ Հայոց Պատրիարքը վերահսկողութիւն ունի խնամուղ որբերի վրայ կամ այն արդիւնքի վրայ, որ տալիս է կամ տուել է «Գեղունիւն»:

ե) Ի՞նչու այս երեք տարուայ ընթացքում հրապարական հաշիւ չի տրուել յիշեալ որբերի վրայ արուած նիւթական, մտաւոր, բարոյական ու ֆիզիքական խնամքի մասին:

Այս վերջին մի քանի տարիներում Ղազարեանները, յանձին ինչ-որ Երեմեանների, մի տեսակ յանդուզն ունձգութիւններ են անում, պարտականութեան խոշոր-խոշոր բեռներ գընում մեր վզին և պահանջում են.

Որ «Բազմավէա» ստանանք ու երբեմն էլ իրենց փառացի փառս բարձրացնենք...

Որ իրենց գոյութեան երկնարիւրամեակը անսենք ու գովարանենք...

Որ իրենց մեռելների համար մեր եկեղեցում հոգեհանգիստ կատարենք և այն պարտադիր կերպով, որ իրենք երբէք չեն անում: *)

Եւ ի վերայ այսը ամենայնի լի սպառնալիքով, և հայութիւնական համեմունքով պահանջում են, որ «Գեղունիւ» ստանանք:

Բայց տեղն ընկած ժամանակ, չեն քաշուում հրապարակապէս աղաղակել-, որ իրենք Հայերի հետ ոչ մի կապ, ոչ մի առնչութիւն չունին, որ իրենք հայերից երես թէքած կաթողիկներ են, պապական պատերներ...

Ականջդ խօսի Ազարեան, միակն էիր դու, որ քաջութիւն

*) Պ. Լուսինեանը թերևս չգիտէ, որ Վեննայի փաքրաթիւ դադութիւ, հայ հովիւ շունեալու պատճառով, իւս հոգմար պէտքերը կատարել է տալիս յոյն քահանային, որովհետև Միկթարեանները բացէ ի բաց մերժում են կատարելու ԽՄԲ.

ունեցար քո, ընկերակիցներիդ և հօտիդ դիմակը պատռելու...

Այս ենման շատ երևոյթներ մեղ բերում են այն եղբակացութեան, որ հայերէն տառերով տպուող մամուլից մեծ մասը ուսքերի տակ բարոյական հող չունենալով, սկսել է արուեստակեալ կերպով պահպանել իւր ողորմելի գոյութիւնը:

Գ. ԼՈՒՄԱՆԵԱՆ

«ԼՈՅՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Վահան Վ. Պարտիզակցու «Լոյսը» բարեփոխուելով և ընկնելով Արմաշեան անդրանիկ սան շնորհալի Բաբգէն ծ. վարդապետի ձեռք տարւոյս յունուարի սկզբից սկսել է լոյս տեսնել կ. Պօլսում իրքն գլխաւորապէս կրօնական շաբաթաթերթի. կ. Պօլսի ամեն. Պատրիարքի՝ խմբագրութեան ուղղած օրհնութեան թուղթը, որ տպուած է թերթի №-1ում, այսպէս է բնորոշում «Լոյսի» նպատակը.

«...Աւելի ժողովրդին պէտքին հետնիլ՝ քան իրենց ճաշակին, աւելի օգտակարին միտ դնել՝ քան հաճելոյն Խորշել անձնականութիւններէ, հակառակաբանութիւններէ, աւելորդ խնդիրներէ: Նոյն իսկ կրօնական կամ դաւանաբանական նրբութեանց մէջ չմտնել, այլ աւելի բարոյական ուղղութեան վրայ քալել»:

Եւ մեր ստացած մի քանի համարները այնքան լուրջ և հետաքրքրական բովանդակութիւն ունին, որ կարելի է յաջող ապագայ գուշակել «Լոյս»-ին, որից լոյս կսպասէ ընթերցողը:

«ՆՈՐ-ԴԱՐ,-Ի ՎԵՐԱՆՈՐՈԴՈՒՄԸ»

Մի պատմական առեղծուած է հայ ազգը և այս տարօրինակ ազգի մէջ կատարուող իրողութիւնները շատ անգամ անհասկանալի են: Ամեն ազգի մէջ իսկական գործիչները և ազգի հաւատարիմ բարեկամներն են արժանանում յարգանքի և բաղդաւորութեան, իսկ մեր մէջ ընդհակառակը, Վաղուց փակուած «Արձադանքը» և նոր վերանորոգուող «Նոր-Դարը» պէտք է խոստովանուել, որ արժանաւորապէս չեն գնահատուել հայ ազգի կողմից: Մակայն պէտք է յուսաւ, որ հետզհետէ աճող ինք-